Ի՞նչ է նշանակում ապրել անկախ ու ներառվել համայնքում

Հեշտ ընթերցվող տարբերակ

Այս հեշտ ընթերցվող փաստաթուղթը գրված է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 19-րդ հոդվածի մեկնաբանության հիման վրա: Այն պատմում է հաշմանդամություն ունեցող մարդկանց անկախ կյանքի ու համայնքում ներառված լինելու մասին:

Ի՞նչ կա այս փաստաթղթում

03 Ինչի՞ մասին է այս փաստաթուղթը

05 Անկախ ապրելը և համայնքում ներառվելը

10 Ի՞նչ է պետք

18 Ի՞նչ պետք է անեն պետությունները

22 Ի՞նչ կապ ունի սա Կոնվենցիայի մյուս մասերի հետ

25 Ինչպե՞ս կարող են պետությունները անել սա

28 Բառարան

Ինչի՞ մասին է այս փաստաթուղթը

Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ) մի վայր է, որտեղ հավաքվում են աշխարհի բոլոր պետությունները:

Նրանք հաճախ հանդիպում են: Նրանք քննարկում են, թե ինչպես աշխարհը ավելի լավ ու անվտանգ տեղ դարձնել բոլորի համար:



Շատ պետություններ ստորագրել են Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան: Կոնվենցիան փաստաթուղթ է, որում ներկայացված են հաշմանդամություն ունեցող անձանց հիմնական իրավունքները:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիան ունի փորձագիտական խումբ: Կոմիտեի աշխատանքն է՝ ստուգել, որպեսզի ամբողջ աշխարհում հաշմանդամություն ունեցող անձինք օգտվեն իրենց իրավունքներից: Կոմիտեն օգնում է պետություններին հասկանալու՝ ի՞նչ կարող են անել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները ապահովելու համար:

Այս փաստաթուղթը բացատրում է, թե ինչ է անկախ կյանքը և համայնքում ներառվելը: Դա Կոնվենցիայի 19-րդ հոդվածն է:

Կոնվենցիայում գրված է, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ ունեն նույն իրավունքները, ինչ մյուսները և պետք է կարողանան օգտվել դրանցից:

Անկախ լինելը և հասարակության մասը լինելը մարդու կարևոր իրավունքներ են: Սակայն հաշմանդամություն ունեցող շատ մարդիկ հանդիպում են խտրականության, որը զրկում է այս իրավունքից, որոշումներ ընդունելուց ու իրենց կյանքը վերահսկելուց:

Այս փաստաթուղթը հաշմանդամություն ունեցող անձանց նոր իրավունքներ չի տալիս, այլ բացատրում է, թե եղած իրավունքներն ինչ են տալիս նրանց:

Անկախ կյանքը և համայնքում ներառվելը

Հաշմանդամություն ունեցող անձինք երկար տարիներ հնարավորություն չունեին իրենց կյանքը վերահսկելու կամ որոշումներ ընդունելու: Մյուսները մտածում էին, որ նրանք չեն կարող ապրել անկախ՝ իրենց ուզած տեղը:

Պետությունները գումար էին ծախսում մյուս մարդկանցից հեռու հատուկ ծառայություններ տրամադրելու վրա, փոխանակ՝ օգնեն նույն համայնքում ապրել:



Հաշմանդամություն ունեցող շատ անձինք դեռևս կախվածության մեջ են իրենց ընտանիքներից և ապրում են նրանց հետ կամ տնից հեռու գտնվող մեծ հաստատություններում: Այդ դեպքերում էլ նրանք կախվածության մեջ են այլ մարդկանցից և քիչ ազատություն ունեն:

Սա կարող է բերել խտրականության, վատ վերաբերմունքի և շահագործման, երբ այլ մարդիկ չեն հարգում նրանց ու նրանց իրավունքները:

Հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց ընտանիքները պայքարում էին փոփոխությունների համար և պահանջում՝

- իրենց տանը և համայնքում ապրելու համար աջակցություն

- ավելի շատ հնարավորություն օգտվելու այն ծառայություններից և շինություններից, որոնցից օգտվում են մյուս մարդիկ:

Հաշմանդամություն ունեցող շատ մարդիկ աղքատ են: Նրանք կարող են ավելի լավ ապրել, եթե պետություններն օգնեն անկախ ապրել և ներառվել համայնքում:

Կոնվենցիայում գրված է, որ հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր մարդ ունի անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունք: Կապ չունի, թե ով է մարդը և որտեղ է ապրում: Դա նրանց տալիս է իրենց կյանքի վրա ազդող որոշումների ազատո թյուն, ընտրության հնարավորություն և վերահսկողություն:

Երբ հաշմանդամություն ունեցող անձինք ապրում ու աշխատում են համայնքում, դա քանդում է մարդկանց միջև եղած խոչընդոտները և օգնում է նրանց ճանաչել ու հասկանալ իրար: Սա կարող է օգնել՝ վերջ տալու հաշմանդամություն ունեցող մարդկանց նկատմամբ խտրականությանը և չարաշահումներին:

Ինչպես բոլորը, հաշմանդամություն ունեցող մարդիկ ապրելու լավ պայմանների իրավունք ունեն: Սա նշանակում է ունենալ՝

- բավարար սնունդ



- տուն, ուր կարող են մտնել և դուրս գալ երբ ցանկանան

- ապրելու համար անհրաժեշտ հիմնական բաները

- աջակցության ծառայություններ



- աջակցող տեխնոլոգիաներ:

Իրավիճակը բարելավվում է, բայց հաշմանդամություն ունեցող մարդիկ չունեն անկախ կյանքի իրավունքը, քանի դեռ՝

- օրենքները նրանց զրկում են գործունակությունից և սեփական կյանքի մասին որոշումներ կայացնելու իրավունքից

- չկա համայնքում անկախ ապրելու համար բավարար օգնություն կամ պաշտպանություն

- պետությունները չունեն ճիշտ օրենքներ, նորմեր կամ գումարը չի հերիքում մարդկանց լիարժեք օգնելու համար



- նրանք ստիպված են ապրել մի տեղ, որն իրենք չեն ընտրել կամ ստանալ բուժում, որը չեն ցանկանում

- պետությունները շարունակում են փողը ծախսել հաշմանդամություն ունեցող մարդկանց մեծ հաստատ թյուններում փակի տակ պահելու վրա և չեն ցանկանում փակել այդ հաստատությունները

- ոմանք կարծում են, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ չեն կարող ապրել համայնքում



- քիչ են ծառայությունները, որոնցից կարող են օգտվել հաշմանդամություն ունեցող մարդիկ, ինչպես օրինակ՝ տրանսպորտ, բնակարանով ապահովում, առողջապահություն, դպրոցներ, թատրոններ կամ հանրային շինություններ

- պետությունները չեն աշխատում հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների հետ

- պետությունները չեն մտածում հաշմանդամություն ունեցող անձանց օգնելու մասին, երբ պլանավորում են, թե ինչպես փող ծախսեն

- նույն երկրի տարբեր մասերն իրար հետ չեն աշխատում, որպեսզի պլանավորեն, թե ինչ է պետք անել:

Ի՞նչ է պետք

Անկախ ապրել նշանակում է ունենալ այն ամենը, ինչը կօգնի վերահսկել քո կյանքը և որոշումներ ընդունել քո կյանքի վերաբերյալ՝

- ապրելու տեղ



- տեղեկատվություն

- հաղորդակցվելու աջակցություն

- քեզ խնամելու աջակցո թյուն

- առօրյա գործեր

- այլ մարդկանց հետ շփում

- սնունդ

- հագուստ



- առողջապահություն

- տրանսպորտ

- սեռական և վերարտադրողական իրավունքներ



- կրոնական կամ հասարակական գործունեության մեջ ներ ռավվելու հնարավորություն

Անկախ ապրել չի նշանակում ամեն ինչ ինքնուրույն անել: Դա նշանակում է որոշել, թե ինչ ես ուզում և ստանալ աջակցություն որոշումներդ իրականացնելու համար:

Համայնքում ներառված լինելը

Համայնքում ներառված լինելը նշանակում է համայնքի մաս լինել, լավ ապրել և ժամանակ անցկացնել այլ մարդկանց հետ, օգտվել ծառայություններից, որոնցից նրանք են օգտվում և զբաղվել նրանով, ինչ նրանք ենք անում:

Անկախ ապրելու պայմանները

Անկախ ապրելը նշանակում է, որ դու կարող ես ընտրել, թե ով քեզ աջակցի և ում հետ ժամանակ անցկացնես: Քո տանը և համայնքում ապրելը դեռ չի նշանակում անկախ ապրել: Պետությունները պետք է ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ կարողանան ընտրել աջակցությունը, որն իրենց պետք է որոշումների ընդունման և համայնքի մասը լինելու համար:

Անձնական օգնական



Անձնական օգնականը վարձու աշխատող է, ում դու ընտրում ես, որ քեզ օգնի անկախ ապրել:

Դու ես որոշում այդ աջակցության ձևը, քանի որ

- դու ունես հաշվարկ, թե ինչքան փող է պետք քեզ աջակցելու համար և դու ես որոշում, թե ինչպես ծախսել այն անհրաժեշտ աջակցությունը ստանալու համար:

- Դու ընտրում ես, թե որ կազմակերպությունը կամ անձը աջակցի քեզ:

- Դու ես վարձում, սովորեցնում և ղեկավարում քո անձնական օգնականին: Նա կարող է օգնել նաև մեկ ո րիշի, միայն եթե դու ուզենաս:

- Դու ես որոշում, թե որքան աջակցություն ունենաս և երբ ստանաս: Դու կարող ես աջակցություն ստանալ նաև այս որոշումներն ընդունելու համար, եթե դու դրա կարիքն ունես: Սա ներառում է այն, որ այլ մարդիկ մտածեն, թե ինչն է քեզ համար կարևոր և ինչպես դա կարող է ազդել քո որոշումների ոա:

Երբեմն ասում են, որ ինչ-որ ծառայությունները «անկախ» են, թույլ են տալիս «համայնքում բնակվել» կամ «անձնական օգնական» ունենալ: Բայց եթե դու չես ընտրում օգնականիդ, ուրիշ մարդիկ են վերահսկում քո կյանքը կամ քեզ հեռու են պահում մարդկանցից:

Ի՞նչ պետք է տեղի ունենա, որ դու ապրես անկախ և ներառվես համայնքում

- Համայնքում ապրելու և համայնքի կյանքում ներգրավված լինելու համար աջակցություն և ընտրության հնարավորություն պետք է ունենան հաշմանդամություն ունեցող բոլոր մարդիկ, անկախ նրանից, թե ինչքան շատ աջակցություն է իրենց պետք:

- Պետությունները պետք է ազատվեն այն ամենից, ինչը րկում է անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքից կամ խտրականացնում հաշմանդամություն ունեցող մարդկանց որոշ խմբերի:

- Որոշումներ ընդունելու համար հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է ստանան աջակցություն և տեղեկություններ և չպետք է լինի որևէ օրենք կամ կանոն, որով նրանց կարող են զրկել գործունակությունից:

- Տանը և տնից դուրս անհատական աջակցություն ունենալը քո իրավունքն է: Այլ մարդիկ չպետք է որոշեն ունենաս այն, թե ոչ:

- Պետությունները պետք է ապահովեն, որ բավարար թվով մասնագետներ վերապատրաստվեն՝ աջակցելու հաշմանդամություն ունեցող մարդկանց դառնալ իրենց համայնքի մասը:

- Հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է ապրեն այլ մարդկանց կողքին, ոչ թե միայն հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված շենքերում կամ տարածքներում:

- Հաշմանդամություն ունեցող բոլոր մարդկանց համար հեշտ է օգտվել իր տանը մոտ գտնվող լավ և հասանելի ծառայություններից:

- Հաշմանդամություն ունեցող երեխաները ապրում ու մեծանում են ընտանիքում

Պետությունները հասկանում և հարգում են հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու իրավունքը, երբ՝

- նրանք համարվում են գործունակ և իրավունք ունեն ընտրել, թե որտեղ ապրեն, ում հետ ապրեն և ինչպես ապրեն:

- Կան շատ մատչելի բնակարաններ, որոնք չեն խտրականացնում հաշմանդամություն ունեցող մարդկանց:

- Հաշմանդամություն ունեցող մարդիկ այլ տարբերակներ ունեն, եթե ցանկանում են ապրել համայնքում, բայց իրենց ընտանիքից առանձին:

- Հաշմանդամություն ունեցող մարդիկ կարող են շփվել, ստանալ տեղեկատվություն և օգտվել նույն շինություններից և ծառայություններից, ինչ մյուսները: Պետությունները օգնում են մատչելի դարձնել շենքերն ու ծառայությունները և պատժում դրանք մատչելի չդարձնողներին:



- Պետությունները ունեն ծրագիր, թե ինչ պետք է անեն լավ անհատականացված ծառայություններ ունենալու համար:



- Պետությունները պահպանում են միջազգային օրենքները և չեն վերադառնում աշխատանքի հին ձևերին առանց լուրջ պատճառի:

- Պետությունները հավաքում են տարբեր տեղերում ապրող հաշմանդամություն ունեցող մարդկանց թվի մասին տվյալներ և այդ տեղերի մասին նրանց կարծիքները:

- Պետությունները օգտագործում են բոլոր հնարավոր գումարները, որ ստեղծեն անկախ ապրելու համար ավելի շատ ծառայություններ, որոնցից կարող են օգտվել բոլորը:

Ի՞նչ պետք է անեն պետությունները

Կոնվենցիան ստորագրած պետությունները պետք է հասկանան, որ մարդու իրավունքները տարբեր են:

Որոշ իրավունքներ պետք է ապահովվեն միանգամից բոլորի համար: Մյուս իրավունքների ապահովման համար պետք է ավելի շատ պլանավորել և մեծ փոփոխություններ անել:



Հենց պետությունը ստորագրում է Կոնվենցիան, այդ պետությունում ապրող հաշմանդամություն ունեցող մարդիկ իրավունք են ստանում ընտրել, թե որտեղ և ում հետ ապրեն: Պետությունները պետք է հանեն այն օրենքները, որոնք խանգարում են այդ իրավունքին:

Բոլոր ծառայությունները, շինությունները և տեղեկատվությունը մատչելի դարձնելու և անձնական օգնականի որակյալ ծառայություններ ստեղծելու համար ավելի երկար ժամանակ է պետք: Բայց պետությունները պետք է ունենան ծրագրեր, թե ինչպես աջակցել հաշմանդամություն ունեցող մարդկանց անկախ ապրել և ինչպես համայնքները մատչելի դարձնել:

Եթե մարդիկ անկախ են ապրում, բայց չեն կարող, օրինակ, գնալ գրադարան, առևտուր անել կամ հանդիպել այլ մարդկանց, ուրեմն նրանք համայնքում ներառված չեն:

Պետությունները պետք է աշխատեն այս ծրագրերի վրա հաշմանդամություն ունեցող մարդկանց և նրանց կազմակերպությունների հետ:

Պետությունները պետք է՝

- հարգեն հաշմանդամություն ունեցող մարդկանց անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքը:

- Ազատվեն խտրական օրենքներից, որոնք զրկում են որոշումներ ընդունելու հնարավորությունից կամ ազատությունից կամ արգելում օգտվել շինություններից կամ ծառայություններից: Չպետք է ստեղծվեն նոր հաստատություններ կամ ծառայություններ, որոնք հաշմանդամություն ունեցող անձանց հեռու են պահում մյուս մարդկանցից:

- Պաշտպանեն հաշմանդամություն ունեցող մարդկանց, երբ ընտանիքները կամ այլ մարդիկ չեն թողնում նրանց անկախ ապրել համայնքում: Պետությունները պետք է ապահովեն, որ «համայնքային կյանքի» ծառայությունները մարդկանց տան ազատություն, որոշումներ ընդունելու կամ վերահսկողության հնարավորություն:

- Պաշտպանեն հաշմանդամություն ունեցող մարդկանց խտրականությունից և հանեն այն օրենքները կամ խոչընդոտները, որոնք արգելում են ապրել համայնքում, ունենալ սեփական բնակարանը և օգտվել բոլոր այն ծառայություններից, որոնցից օգտվում են մյուսները:



- Ժամկետներ որոշեն, թե երբ մե առանձնացված ծառայությունները կդադարեն լինել և այդ ծրագիրը պլանավորելուց ներգրավել հաշմանդամություն ունեցող մարդկանց ու կառավարության բոլոր օղակներին:

- Սահմանեն գնահատումները և աջակցությունը, որը պետք է մարդկանց համայնքում ապրելու համար: Աջակցությունը պետք է լինի ֆինանսապես մատչելի և ճիշտ ընտրված:



- Հաշմանդամություն ունեցող մարդկանց ժամանակին, պարզ տեղեկություններ տան, որը կօգնի նրանց անկախ ապրելու մասին որոշումներ ընդունե իս: Ունենան կանոններ (չափանիշներ) նրանց համար, ովքեր աջակցության ծառայություններ են առաջարկում մարդկանց և ապահովեն, որ աշխատողները գիտելիք ունենան համայնքում ապրելու ու ներառման մասին:

- Պետությունները պիտի ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ օգտվեն օրենքներից և դատարաններով ստանան կամ վերականգնեն համայնքում անկախ ապրելու իրավունքը:

- Աջակցեն ընտանիքներին և խնամողներին, որ նրանք կարողանան օգնել իրենց հարազատներին ապրելու համայնքում: Օրինակ՝ ապահովեն երեխաների խնամքը, հանգիստը կամ թոշակը, եթե նրանք աշխատանքի գնալու փոխարեն պետք է մնան տանը և խնամեն ինչ-որ մեկին:

- Շարունակեն հարցնել հաշմանդամություն ունեցող մարդկանց, թե ինչն է նրանց խանգարում համայնքում անկախ ապրել և ինչը կարող է վիճակը լավացնել:

Ի՞նչ կապ ունի սա Կոնվենցիայի մյուս մասերի հետ

Անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքը բերում է այլ իրավունքներին, օրինակ՝ համայնքի մասին որոշումների ընդունմանը մասնակցելուն:

Դա կապ ունի նաև այս իրավունքների հետ՝

- հավասար վերաբերմունք ստանալու և չխտրականացվելու իրավունք

- որպես կին հավասար վերաբերմունք ստանալու և չարաշահումից ու բռնությունից պաշտպանված լինելու իրավունք

- մյուսների հետ աշխատելու հնարավորություն

- ստանալ անհրաժեշտ խնամք և աջակցություն, ներառյալ՝ աջակցող տեխնոլոգիաները

- օգտվել հանրային ծառայություններից, շինություններից և տրանսպորտից

- ազատ ճանապարհորդել

- օրենքի առաջ լինել հավասար և գործունակ լինել



- ունենալ քեզ համար մատչելի ձևաչափով տեղեկատվություն, ներառյալ՝ բրայլյան, ժեստերի լեզվով (խուլերի համար) և հեշտ ընթերցվող

- ունենալ լիարժեք կյանք և ապրելու լավ պայմաններ



- լինել ընտանիքի մասը

- ունենալ լավ առողջապահություն

- քվեարկել, լինել հանձնաժողովի անդամ, դիտորդ կամ առաջադրվել ընտրությունների ժամանակ

- բոլորը պետք է իմանան, որ հաշմանդամություն ունեցող մարդկանց նկատմամբ վատ վերաբերմունքը սխալ է

Ինչպե՞ս կարող են պետությունները անել սա

Մենք հասկանում ենք, որ որոշ պետություններ շատ փոփոխություններ պետք է անեն, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ ապրեն անկախ և ներառվեն համայնքում:

Կոնվենցիան ստորագրած պետությունները կարող են ապահովել անկախ կյանքի և համայնքում ներառված լինելու իրավունքը, եթե՝

- ազատվեն օրենքներից, որոնք արգելում են հաշմանդամություն ունեցող մարդկանց ընտրել, թե որտեղ ապրեն և օրենքներից, որոնք ստիպում են ապրել ուրիշ տեղ

- ունենան օրենքներ, որոնք նպաստում են հաշմանդամություն ունեցող մարդկանց համայնքում ապրելու իրավունքին



- հաշմանդամություն ունեցող մարդկանց հասկանալի ձևով պատմեն իրեն իրավունքների մասին



ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ Է

- ունենան օրենքներ, որ շինությունները, ծառայությունները և տեղեկատվությունը մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող մարդկանց համար, իսկ այն մարդիկ ու կազմակերպությունները, որոնք խախտում են այս օրենքները, պատժվեն

- ապահովեն, որ սոցիալական պաշտպանության ծրագրերը արդար լինեն հաշմանդամություն ունեցող բոլոր մարդկանց համար

- ունենան պարզ, կոնկրետ ժամկետո ծրագրեր փակելու այն մե հաստատությունները, որոնք հաշմանդամություն ունեցող մարդկանց հեռու են պահում մյուսներից, սա հատկապես վերաբերում է հաշմանդամություն ունեցող երեխաներին, սովորելու դժվարություն կամ մտավոր խնդիրներ ունեցող մարդկանց

Խտրականությունն արգելված է

- պայքարեն խտրականության դեմ՝ օգնելով այլ մարդկանց հասկանալու և հարգելու հաշմանդամություն ունեցող մարդկանց ու նրանց իրավունքները

- համայնքային ծառայությունները պլանավորեն և վերահսկեն հաշմանդամություն ունեցող մարդկանց և նրանց կազմակերպությունների հետ

- փող հատկացնեն մատչելի և էժան բնակարանի, տրանսպորտի և համայնքում աջակցության համար

- համայնքում ապրող մարդկանց աջակցող ծառայություններ որոշելիս իմանան ինչպես ապահովել մարդկանց ազատությունը, որոշումներ ընդունելու վերահսկողության հնարավորությունը

Բառարան

Մատչելիություն	Երբ հեշտ է որևէ տեղ մտնելը, ինչ-որ բան հասկանալը կամ ինչ-որ բանից օգտվելը
Թոշակ	Գումար, որը իրավունք ունես կանոնավոր ստանալ
Գնահատում	Քո կարիքները և անհրաժեշտ աջակցությունը պարզելու ձև
Աջակցող տեխնոլոգիա	Սարք կամ համակարգչային ծրագիր, որ օգնում է հաշմանդամություն ունեցող մարդուն լինելու անկախ կամ ավելի հեշտ անել ինչ-որ բաներ, օրինակ՝ բռնակ կամ խոսքով կառավարվող տեխնիկա

Խոչընդոտ

Կանոն, օրենք կամ ֆիզիկական ինչ-որ բան, որը դժվարացնում կամ անհնար է դարձնում ինչ-որ բան անելը

Նպաստ

Մեկ անգամ կամ պարբերաբար տրվող գումար, որը հաշմանդամություն ունեցող մարդը ստանում է կառավարությունից որպես աջակցություն

Բրայլ

Գրելու ձև, որով կույր մարդիկ կարող են կարդալ իրենց մատները սահեցնելով ուռուցիկ կետերի վրայով

Կոնվենցիա

Տարբեր պետությունների միջև համաձայնության մասին փաստաթուղթ

Կախվածություն

Ինչ-որ մեկի օգնության կարիքն ունենալ կամ հույսը դնել ուրիշների օգնության կամ աջակցության վրա

Խտրականություն Ինչ-որ մեկին մյուսներից վ տ վերաբերվելը՝ նրա տարբերվելու պատճառով

Ընտրություն Տեղական կամ պետական իշխանությանը ընտրելու կազմակերպված ձև

Մարդու իրավունքներ Հիմն կան իրավունքներ և ազատություններ, որոնք աշխարհի բոլոր մարդիկ պետք է ունենան

Ներառականություն Մյուսների հետ նույն շինություններից կամ ծառայություններից օգտվելու, ընդհանուր միջոցառումներին մ սնակից լինելու և նույն բաները փորձելու հնարավորություն

Անկախություն Ընտրել, թե ինչ ես դու ուզում և ունենալ աջակցություն որոշածը անելու համար, սակայն անկախ լինել չի նշանակում, որ ամեն ինչ ինքնուրույն ես անում

Անկախ ապրել	Երբ ունես այն, ինչ անհրաժեշտ է, որ վերահսկես քո կյանքը և որոշումներ ընդունես քո կյանքի մասին
Գործունակություն	18 տարին լրացած ամեն մ դու պայմանագրեր կնքելու ու որոշումներ ընդունելու իրավունքը
Անձնական օգնական	Վարձու աշխատող, ում դու ընտրում ես, որ օգնի քեզ անկախ ապրել
Քաղաքականություն	Տեղական կամ պետական կառավարում և որոշումների կայ ցում
Քվեարկել	Կազմակերպված ընտրությունների ժամանակ մեկ կ մ մի քանի մարդկանց ընտրելու ձև

Աղքատություն	Երբ չունես փող, որ վճարես հիմն կան բաների համար
Սեռական և վերարտադրողական իրավունքներ	Անվտանգ սեռական հարաբերություններ ունենալու ու առողջ լինելու, երեխա ունենալու կամ չունենալու և առողջ երեխա ունենալու համար անհրաժեշտ աջակցություն ստանալու իրավունք
Սոցիալական պաշտպանություն	Այն ամենը, ինչ մ րդկանց տալիս է նույն հնարավորությունները, օրինակ՝ բավարար սնունդ, հիմն կան առողջապահական ծառայություններ, դպրոց կամ փող
Միավորված ազգերի կազմակերպություն	193 տարբեր պետությունների կազմակերպություն, որը փորձում է աշխարհը դարձնել բոլորի համար ավելի անվտանգ ու լավ վայր



Սույն ձեռնարկը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի ֆինանսական աջակցությամբ: Ձեռնարկում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են, և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

2020 թ.